ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2011

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

Գերակա խնդիրների և միջոցառումների ծրագրի իրականացման արդյունքների

ՆԱԽԱԲԱՆ

ՀՀ էկոնոմիկայի նախարարության (Նախարարության) 2011 թվականի գործունեության ծրագրային հիմքը կազմել են ՀՀ նախագահի նախընտրական ծրագիրը, ՀՀ կառավարության ծրագիրը, ՀՀ կառավարության 2008-2012թթ. գործունեության միջոցառումների ծրագիրը, ՀՀ կառավարության 2011 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները, ՀՀ կառավարության կողմից հաստատված առանձին ոլորտների զարգացման ծրագրերն ու հայեցակարգերը:

Նախարարության համար 2011թ. հիմնականում նշանավորվեց քաղաքականության գերակայությունների ուղղությամբ արձանագրված առաջընթացով, ինչն արտահայտվեց տնտեսական համապատասխան ցուցանիշների դինամիկայով:

2011թ. բնորոշվեց որպես տնտեսության կայունացման տարի: 2011թ. հունվար-նոյեմբերին տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ) կազմեց 105.5%: Բացառությամբ շինարարության ոլորտի, մյուս ոլորտներում գրանցվեց ծավալների աճ: Արձանագրված բարձր աճի շնորհիվ արդյունաբերության ոլորտն առավել շատ նպաստեց ՏԱՑ-ի ձևավորմանը: Նկատվեց նաև արդյունաբերության ոլորտի արտահանման ուղղվածության խորացում: Տարվա ընթացքում պահպանվեց ներմուծման նկատմամբ արտահանման ծավալների աճի առաջանցիկ տեմպը՝ անցած ամիսներին գրանցելով աճի երկնիշ ցուցանիշներ: 2011թ. հունվար-նոյեմբերին արտահանման ծավալների աճը կազմեց 34.7% ներմուծման 11.2% աճի դիմաց: Դրական միտում գրանցվեց նաև օտարերկրյա ներդրումների առումով, ինչն արտահայտվեց թե' ընդհանուր, թե' ուղղակի ներդրումների ծավալների աճով:

Գործարար միջավայրի բարելավման բարեփոխումների արդյունքում Միջազգային ֆինանսական կորպորացիայի և Համաշխարհային բանկի կողմից հրապարակված «Գործարարությամբ զբաղվելը 2012. Գործարարությունն ավելի թափանցիկ աշխարհում» զեկույցի տվյալներով 2010թ. հունիսից մինչև 2011թ. մայիսն ընկած ժամանակահատվածում Հայաստանն իրականացրել է կանոնակարգման և ինստիտուցիոնալ դաշտի հինգ բարեփոխում՝ ամենաշատը տարածաշրջանում և աշխարհում: Արդյունքում երկիրը վարկանիշը բարելավել է 6 կետով՝ զբաղեցնելով վարկանշային սանդղակի 55-րդ տեղը 183 երկրների շարքում:

ՀՀ կառավարության 2011թ. գործունեության միջոցառումների ծրագրով նախատեսված Նախարարության պատասխանատվությամբ 10 կետերը կատարվել են սահմանված ժամկետներում: Հաշվետու տարվա համար Նախարարության գործունեության օրակարգում թիրախավորվել էին 4 գերակա խնդիրներ, որոնց իրագործման համար իրականացված աշխատանքների հաշվետվությունը ներկայացվում է ստորև:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ և ԵՄ միջև Խոր և համապարփակ ազատ առևտրի գոտու (ԽՀԱԱԳ) ստեղծման շուրջ վարվելիք բանակցությունների մեկնարկի ապահովման նպատակով ՀՀ վարչապետի որոշմամբ հաստատվել է միջոցառումների ժամանակացույց: Իրականացված աշխատանքների արդյունքում գերակա առաջնային ոլորտներում (ընդհանուր համակարգում, SPS, TBT, IRP) նախատեսված միջոցառումները կատարվել են, որի արդյունքում 2012թ. սկզբին ակնկալվում է ԽՀԱԱԳ բանակցությունների մեկնարկը:

ՀՀ-ԵՄ Ասոցացման համաձայնագրի բանակցային գործընթացի շրջանակներում ստեղծված տնտեսական, ֆինանսական և ոլորտային համագործակցության հարցերով աշխատանքային խմբի (համակարգող՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարություն) կողմից բանակցվել և եվրոպական կողմի հետ համաձայնեցվել է ապագա համաձայնագրի 20 գլուխ:

ՀՀ և ԵՄ միջև կնքվել է 4 ֆինանսական համաձայնագիր, որոնց ընդհանուր արժեքը կազմում է շուրջ 31 մլն եվրո. «Աջակցություն ՀՀ կառավարությանը՝ ուղղված ԵՀՔ գործողությունների ծրագրի իրականացմանը և ապագա Ասոցացման համաձայնագրի գծով նախապատրաստական աշխատանքներին» (21 մլն եվրո), «ԵՄ-Հայաստան Եվրոպական հարևանության քաղաքականության գործողությունների ծրագրի և Արևելյան գործընկերության իրականացմանն ուղղված՝ Թվինինգ և տեխնիկական աջակցության գործիքների մասին» (6.7 մլն եվրո), «Հայաստան – պարենային ապահովության ծրագիր 2010» (2.2 մլն եվրո), «Միջուկային ոլորտը կարգավորող հայաստանյան մարմնի ինստիտուցիոնալ զարգացում» ծրագիր (1 մլն եվրո):

ԱՀԿ համաձայնագրերի դրույթներին համապատասխանեցման և ՀՀ ստանձնած պարտավորությունների ապահովման նպատակով իրականացվել են փոփոխություններ «Ներքին շուկայի պաշտպանության մասին», «Լիցենզավորման մասին», «Պետական տուրքի մասին», «Ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճարների մասին», «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքներում:

Ավարտին է հասցվել ԱՀԿ պետական գնումների մասին համաձայնագրին ՀՀ անդամակցության ներպետական գործընթացը, որի արդյունքում Համաձայնագիրը պաշտոնապես ուժի մեջ է մտել ս. թ. սեպտեմբերի 15-ին:

Ամփոփվել են Եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ) ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրի կատարումն ապահովող 2009-2011թթ. միջոցառումների ցանկով նախատեսված աշխատանքները և ներկայացվել եվրոպական կողմին:

Պետական կառավարման մարմինների զարգացման համապարփակ ծրագրի (CIB) շրջանակներում (ԵՄ կողմից 32 մլն. եվրո է նախատեսվում 2011-2013թթ. ընթացքում ծրագրի իրականացման համար) մշակվել և ՀՀ վարչապետի որոշմամբ հաստատվել են հետևյալ երեք ոլորտների ինստիտուցիոնալ բարեփոխումների ծրագրերը՝ Ասոցացման համաձայնագրի կնքման ուղղությամբ բանակցություններ, Արդարադատություն, ազատություն և անվտանգություն, ԽՀԱԱԳ կնքման շուրջ բանակցություններ:

Թվինինգ ծրագրեր. Իրականացման ընթացքում են գտնվում 4 ծրագրեր, որոնցից 3-ը մեկնարկել են 2011թ. գարնանը, 4 ծրագիր գտնվում է ընտրված անդամ-պետության հետ պայմանագրի վերջնականացման ու ստորագրման փուլում, 3 ծրագրեր ընտրել են գործընկեր անդամ-պետություն և մեկնարկել պայմանագրի մշակման գործընթացը, պետական կառավարման մարմինների կողմից ներկայացված 7 հայտերից 2012թ. համար հաստատվել է 3 նոր հայտ: **Թայեքս ծրագրեր**. Պետական մարմիններից ստացվել է 49 հայտ, որոնցից իրականացվել է 20 ծրագիր-միջոցառում: **Սևծովյան ավազանի երկրների անդրսահմանային համագործակցության ծրագիր** (CBC). Ծրագրի հայտերի ընդունման առաջին փուլի ամփոփում, արդյունքում Հայաստանը ներգրավվել է հաղթող ծրագրերից 7-ում:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարության որոշմամբ ընդունվեց Նախարարության կողմից ՀԲ աջակցությամբ մշակված «Հայաստանի Հանրապետությունում արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության» ռազմավարությունը, որի գլխավոր նպատակն է երկարաժամկետ հեռանկարում տնտեսական աճի նոր շարժիչ ոլորտների ձևավորումը՝ ձեռնարկությունների, արտահանման պոտենցիալ ունեցող ոլորտների և բիզնես միջավայրի շարունակական արդիականացման և միջազգային մրցունակության բարձրացմանն ուղղված նախաձեռնությունների իրականացման միջոցով: Ռազմավարությամբ նախանշված արդյունաբերական 11 ոլորտներից 3-ում (ճշգրիտ ճարտարագիտություն,

կոնյակագործություն և դեղագործություն) արդեն կատարվել են միկրոմակարդակով ուսումնասիրություններ և վերլուծություններ: Ռազմավարության դրույթներն ապահովելու նպատակով մշակվել է ՀՀ վարչապետի որոշման նախագիծ արդյունաբերական խորհրդի ստեղծման և գործունեության աշխատակարգ սահմանելու մասին:

300 **մլն դրամը գերազանցող ներդրումային ծրագրի շրջանակներում ԱԱՀ-ի հետադարձում**. 2011թ. ընթացքում մշակվել և ՀՀ կառավարության կողմից հավանության են արժանացել 10 ընկերությունների ներդրումային ծրագրեր սննդարդյունաբերության, մետաղագործության, էներգետիկայի և դեղագործության ոլորտներում, որոնց ընդհանուր ներդրումները կազմում են մոտ 52.9 մլրդ ՀՀ դրամ, և արդյունքում նախատեսվում է մոտ 1100 նոր աշխատատեղերի ստեղծում:

«Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմի ժամկետների երկարաձգում. Նախարարության առաջարկությամբ 2011թ. ՀՀ կառավարության կողմից «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով ներմուծված ապրանքների ժամկետների երկարաձգման թույլտվություն են ստացել թվով 7 ընկերությունների 8 ծրագրեր:

Պարբերաբար կազմակերպվել են ՀՀ էկոնոմիկայի նախարարի այցելություններ արդյունաբերական ձեռնարկություններ՝ իրականացվող աշխատանքներին ծանոթանալու և առկա խնդիրները քննարկելու համար: Մասնավորապես, ՀՀ էկոնոմիկայի նախարարն այցելել է 2 տասնյակից ավելի ընկերություն, տեղում ծանոթացել նշված ընկերությունների և ոլորտի հիմնախնդիրներին, քննարկել դրանց լուծման հնարավորությունները և առաջարկել Նախարարության աջակցությունը դրանց լուծման հարցում:

ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐ

ՀՀ էկոնոմիկայի նախարարության համակարգմամբ գործարար միջավայրի բարելավմանն ուղղված քայլերը ներառեցին հետևյալ ուղղությունները.

Ընկերությունների գրանցում. Ապրիլից եվրոպական չափանիշներին համապատասխան գործում է ընկերությունների էլեկտրոնային գրանցման «Մեկ պատուհանի կանգառ» սկզբունքով ծառայությունների մատուցման կենտրոնը, որտեղ ի թիվս այլ ծառայությունների ֆիրմային անվանումների փորձաքննության անցկացումը և ՀՎՀՀ-ի տրամադրումն ապահովում է Ռեգիստրը: Արդյունքում տիպային կանոնադրությամբ իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացվում է 15–30 րոպեի ընթացքում, իսկ բարդ կանոնադրություն ունեցող իրավաբանական անձանց պետական գրանցումը՝ առավելագույնը 3 օրում:

Հարկերի վճարում. Շահութահարկի կանխավճարները և շահութահարկի նվազագույն վճարումները կրճատվել են 8-ով: Այդ վճարումները կատարվում են եռամսյակային կտրվածքով (տարեկան 4 վճարում)՝ նախկին ամսականի փոխարեն (տարեկան 12 վճարում): Գույքահարկի և հողի հարկի վճարումները կրճատվել են 2-ով: Այդ վճարումները կատարվում են կիսամյակային կտրվածքով (տարեկան 2 վճարում), նախկին եռամսյակայինի փոխարեն (տարեկան 4 վճարում): Ներկայացվող պարտադիր սոցիալական ապահովության վճարների հաշվետվությունները կրճատվել են 8-ով: Դրանք ներկայացվում են եռամսյակային կտրվածքով՝ նախկին ամսականի փոխարեն: Երկարաձգվել է մինչև 70 մլն. դրամ շրջանառություն ունեցող ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտների մոտ տեսչական ստուգումների արգելքը: Հարկային մարմիններում ներդրվել է էլեկտրոնային համակարգ, որի արդյունքում տնտեսվարողները հնարավորություն ունեն հարկային հաշվետվությունները ներկայացնել նաև էլեկտրոնային եղանակով, ստեղծվել է էլեկտրոնային եղանակով հարկային հաշիվների դուրսգրման հնարավորություն: Հաստատվել է հարկային

մարմնի գործունեության շրջանակներում ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունն որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը:

Արտաքին առևտուր. Համապատասխանության պարտադիր հավաստման գործընթացն իրականացվում է ոչ թե սահմանի վրա, այլ մաքսազերծումից հետո՝ մինչև իրացնելը: Չափման միջոցների տեսակի հաստատումն իրականացվում է մաքսազերծումից հետո մինչև իրացում կամ շահագործում: Կրճատվել են տնտեսվարողների կողմից ծագման երկրի սերտիֆիկատի ստացման գործընթացի համար ծախսվող ժամանակը և ծախսերը, մասնավորապես՝ սերիական արտադրության ապրանքների համար պարբերաբար ծագման երկրի սերտիֆիկատը կտրամադրվի միայն առաջին անգամ փորձաքննություն իրականացնելով: Ներդրվում է նաև ծագման երկրի սերտիֆիկատի ստացման համար փաստաթղթերի ներկայացման էլեկտրոնային համակարգ: Ներդրվել է մաքսային հայտարարագրման էլեկտրոնային համակարգ և մաքսային հսկողության իրականացման ռիսկերի կառավարման համակարգ: Մաքսային վարչարարության պրակտիկայում վերացվել է նախկինում ներկայացվող ընդհանուր թվով 21 տեսակի դիմումների, տեղեկանքների, թույլտվությունների և համաձայնությունների կիրառությունը:

Շինարարական թույլտվություններ. Ինժեներական սպասարկում իրականացնող ծառայությունների կողմից տրվող օբյեկտի նախագծման տեխնիկական պայմանները կառուցապատողին են տրամադրվում ճարտարապետահատակագծային առաջադրանքի հետ համատեղ ճարտարապետահատակագծային առաջադրանք տվողի կողմից: Ընդլայնվել է այն օբյեկտների ցանկը, որոնց համար քաղաքաշինական փորձաքննությունը կարող է փոխարինվել հեղինակի կողմից տրվող երաշխավորագրով: Բարձրացվել է բնապահպանական փորձաքննության ենթակա շինությունների մակերեսի շեմը:

Պայմանագրերի կիրարկում. ԴԱՀԿ ծառայությունում ներդրվել է պարտապանի գույքի հարկադիր իրացման աճուրդների իրականացման էլեկտրոնային համակարգ: Ստեղծվել է «ԴատաԼեքս» հանրային տեղեկատվական համակարգը, որը նախատեսված է դատական բնագավառի մի շարք ծառայությունների առցանց տրամադրման համար:

Վարկերի ստացում. ՀՀ կենտրոնական բանկն ընդունել է մի շարք իրավական ակտեր, որոնք ուղղված են վարկային բյուրոներին տրամադրվող վարկային տեղեկատվության գաղտնիության ապահովմանը, վարկային բյուրոների լիցենզավորմանը, բարձրացվել է վարկային տեղեկատվության հասանելիությունը:

Ներդրողների պաշտպանություն. Ընդունվել է «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որով կատարելագործվում են շահագրգռվածության առկայությամբ իրականացված գործարքների բացահայտման մեխանիզմները, և ընդլայնվում տնօրենների պատասխանատվությունը: ՀՀ կառավարության կողմից հաստատվեց 50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ ընկերություններում Կորպորատիվ կառավարման կանոնագրքի ներդրման ժամանակացույցը: Տպագրվում է կանոնագրքի ներդրման ուղեցույցը և տարեկան հայտարարագրի նմուշօրինակը:

Սեփականության գրանցում. Օրենսդրական փոփոխությունների արդյունքում ապահովվեց գույքային իրավունքների պետական գրանցման ընթացակարգերի պարզեցում, հաշվառման (չափագրման) գործառույթի մասնավորեցում, անշարժ գույքի հետ կապված առանձին գործարքների կնքման պարզեցված ընթացակարգի ներդրում:

ՀՀ Նախագահի հրամանագրով ստեղծվեց **ՀՀ տնտեսական ոլորտը կարգավորող իրավական ակտերի բարեփոխումների խորհուրդ**, որի նպատակն է գործարար միջավայրի և շուկայական

տնտեսության զարգացմանը խոչընդոտող դրույթների վերացումը, պետության կողմից քաղաքացիներին մատուցվող ծառայությունների բարելավումն ու պարզեցումը, այս ոլորտներում գործող նորմատիվ իրավական ակտերի կատարելագործումը, դրանցով սահմանված տնտեսապես ոչ արդյունավետ, ծախսատար մեխանիզմների կրճատման վերաբերյալ առաջարկություններ մշակելը: Ստեղծվեց ՀՀ կառավարության աշխատակազմի «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը, որի նպատակն է ՀՀ կարգավորող նորմատիվ իրավական ակտերի վերանայման արդյունքում դրանց կրճատման, ինչպես նաև դրանց հստակեցման և պարզեցման աշխատանքների և ծրագրերի իրականացման ապահովումը:

Իրավական ակտերի ազդեցության գնահատում. ՀՀ կառավարության հավանությանն արժանացավ ՀՀ-ում նորմատիվ իրավական ակտերի կարգավորման ազդեցության գնահատման համակարգի կատարելագործման հայեցակարգը: Մշակվել է նորմատիվ իրավական ակտերի ազդեցության գնահատման ձեռնարկը: «Կարգավորման կառավարում/Ստանդարտ ծախսերի մոդել» Թվինինգ ծրագրի շրջանակներում Երևանում անցկացվեց «Արդյունավետ կարգավորում. մարտահրավերներ և միտումներ» խորագրով միջազգային համաժողովը:

ՈՐԱԿԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ

ՀՀ ԱԺ կողմից առաջին ընթերցմամբ ընդունվել են ՀՀ կառավարության ներկայացրած «Ստանդարտացման մասին», «Տեխնիկական կանոնակարգման մասին», «Չափումների միասնականության ապահովման մասին» և «Հավատարմագրման մասին» ՀՀ օրենքների նախագծերը, որոնք ուղղված են արտադրանքի ազատ տեղաշարժի, գործընթացների թափանցիկության ապահովմանը, չափումների ոչ հավաստի արդյունքների բացասական հետևանքներից սպառողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը:

Հաստատվել է ՀՀ արդյունաբերության ընտրված ոլորտների օրենսդրությունը ԵՄ մակարդակում կանոնակարգվող արդյունաբերական ոլորտների օրենսդրությանը մոտարկման ծրագիրը, ըստ որի առաջնային են համարվել խաղալիքների անվտանգության, ցածրավոլտ սարքավորումների և էլեկտրամագնիսական համատեղելիության ոլորտների կանոնակարգերի մոտարկումը:

Ստորագրվել են «ՀՀ կառավարության և Վրաստանի կառավարության միջև ստանդարտացման, չափագիտության և համապատասխանության գնահատման բնագավառում համագործակցության մասին», «Հայաստանի Հանրապետության կառավարության և Լիբանանի Հանրապետության կառավարության միջև համապատասխանության սերտիֆիկատների փոխադարձ ճանաչման մասին» համաձայնագրերը:

ՏԵՍՉԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

Հայաստանում տեսչական բարեփոխումների հայեցակարգի ներքո ընդունվել է «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, համաձայն որի ստուգում իրականացնող բոլոր մարմինները պետք է ներդնեն ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգեր և պլանավորեն ստուգումները՝ ելնելով տնտեսվարող սուբյեկտի ռիսկայնությունից: Կախված ռիսկայնության մակարդակից՝ միևնույն տնտեսվարող սուբյեկտի մոտ ստուգումների հաճախականությունը կլինի տարբերակված:

Տեսչական բարեփոխումների համակարգման խորհրդի հավանությանն են արժանացել ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգի մեթոդաբանության մշակման մեթոդական ուղեցույցը, ստուգաթերթերի մշակման մեթոդական ուղեցույցը, ստուգումների տարեկան ծրագրի օրինակելի ձևը և լրացման ուղեցույցը, նախորդ տարվա ընթացքում անցկացված ստուգումների և ուսումնասիրութ-

յունների հաշվետվության օրինակելի ձևը և լրացման ուղեցույցը:

Պիլոտային ծրագրերի շրջանակներում Խորհրդի հավանությանն են արժանացել հրդեհային, հիգիենիկ և համաճարակային, աշխատանքի պետական տեսչություններում ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգի ներդրման ծրագրերը: Ընթանում են տեսչությունների կողմից առանձին ոլորտների ստուգաթերթերի նախագծերի մշակման գործընթացները: Շրջանառության մեջ է գտնվում «Շուկայի վերահսկողության և արտադրանքի հսկողության մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը սահմանում է շուկայի վերահսկողության ողջ համակարգը:

ՀՀ կառավարության որոշմամբ հաստատվել է հարկային մարմնի գործունեության շրջանակներում ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը:

ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ (ՓՄՁ)

2011թ. ընթացքում իրականացվել է ՓՄՁ պետական աջակցության ծրագիրը, որի շրջանակում աջակցություն է տրամադրվել 3580 սուբյեկտի, այդ թվում՝ վարկային երաշխավորությունների տրամադրում 49.8 մլն դրամի (75.4 մլն ՀՀ դրամի վարկային փաթեթ), 95 սկսնակ գործարարների աջակցություն (14-ը՝ ֆինանսական) 25.2 մլն դրամ վարկի ընդհանուր գումարով (Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի երաշխավորությունը՝ 30.2 մլն դրամ), «ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի միջոցով տրամադրվել է 38 վարկ ընդհանուր 2440,9 մլն դրամ գումարի չափով:

Ապահովվել է Հաշվապահական կենտրոնի գործունեությունը, որը հաշվապահության վարման որակյալ և մատչելի ծառայություններ է մատուցում փոքր ձեռնարկություններին:

ՀՀ վարչապետի գլխավորությամբ ստեղծվել է փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման խորհուրդ, որի նպատակը ՓՄՁ համար գործարար միջավայրի բարելավման հարցերով պետության և գործարար համայնքի արդյունավետ երկխոսության ապահովումն է: Խորհրդի կազմում ընդգրկված են նաև գործարար համայնքի ներկայացուցիչներ:

Իրականացվել են ՓՄՁ զարգացման նոր ռազմավարության մշակման աշխատանքները: ՀՀ կառավարության կողմից հաստատվել է Նախարարության կողմից մշակված «ՓՄՁ աջակցության 2012 թվականի ծրագիրը»:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

2011թ. ընթացքում աշխատանքներ են կատարվել 59 երկկողմ և 12 բազմակողմ համաձայնագրերի տեքստերի թարգմանության, ուսումնասիրության, փորձաքննության, խմբագրման, ներպետական համաձայնեցման, վավերացման գործընթացի իրականացման, ստորագրման նախապատրաստման ուղղությամբ:

Նախապատրաստվել և անց են կացվել հայ-չինական, հայ-ուկրաինական, հայ-լեհական միջկառավարական հանձնաժողովների նիստերը: Մասնակցություն է ցուցաբերվել մեկ տասնյակից ավելի միջկառավարական հանձնաժողովների նիստերի կազմակերպման և անցկացման աշխատանքներին:

Նախապատրաստվել և կազմակերպվել է Հնդկաստանի կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների պետնախարարի այցը Հայաստան՝ Երևանում հայ-հնդկական տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների ուսումնական կենտրոնի պաշտոնական բացման արարողությանը մասնակցելու նպատակով:

ՀՀ և ՌԴ մինչև 2020թ. երկարատև տնտեսական համագործակցության ծրագրի և համապատասխան հայեցակարգի մշակման նպատակով ստեղծվել է հայ-ռուսական աշխատանքային խումբ, որի կողմից մշակված Ծրագրի Հայեցակարգի նախագիծը ներկայացվել է Նախարարությունում կայացած համատեղ նիստում, ստորագրվել է համապատասխան Արձանագրությունը: Նախագիծը գտնվում է կողմերի ներպետական շրջանառության փուլում:

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

2011թ. հունվար-սեպտեմբերին ՀՀ տնտեսության իրական հատվածում կատարված ներդրումների ծավալը կազմել է 586.7 մլն ԱՄՆ դոլար՝ աճելով նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ 24.2 տոկոսով: Ուղղակի ներդրումները կազմել են 462.5 մլն. դոլար՝ աճելով 32.6 տոկոսով:

ՀՀ Աժ կողմից ընդունվել է Նախարարության կողմից մշակված «Ազատ տնտեսական գոտիների մասին» ՀՀ օրենքը և մի շարք այլ օրենքներում փոփոխություններ: Օրենքի կիրարկումն ապահովելու նպատակով ՀՀ կառավարության որոշմամբ հաստատվել են ազատ տնտեսական գոտու կազմակերպչի ընտրության ու չափանիշների սահմանման, շահագործողների թույլտվության տրամադրման և դադարեցման, գործարար ծրագրին ներկայացվող պահանջներն ու գնահատման և ազատ տնտեսական գոտու սահմանագծին ներկայացվող տեխնիկական պահանջների վերաբերյալ կարգերը:

Ստորագրվել է «ՀՀ էկոնոմիկայի նախարարության և «Կորպորասիոն Ամերիկա ՍԱ» ընկերության միջև «Զվարթնոց» օդանավակայանի հարակից տարածքում ազատ տնտեսական գոտի ստեղծելու նպատակով համագործակցության համաձայնագիրը»: Ստեղծվող ազատ տնտեսական գոտում ոսկերչական ընկերությունների գործունեության կազմակերպման խնդիրների քննարկման նպատակով բանակցություններ են ընթանում «Հայ ոսկերիչների միջազգային ասոցիացիա» ՀԿ ներկայացուցիչների հետ: Ներկայացվել է ազատ տնտեսական գոտու ծրագիրը և կողմերի պատկերացումները հետագա քայլերի վերաբերյալ:

Մշակվել են «Հայաստան. Ներդրումների երկիր» ներդրումային առավելությունների ուղեցույց, ներդրումային հնարավորությունների վերաբերյալ ներդրումային քարտեզ, ներդրումային ծրագրի անձնագիր, Հայաստանում ներդրումներ կատարելու «Յոթ և ավելի պատճառներ» թղթապանակը:

ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՇՈՒԿԱՆԵՐ

2011թ. հոկտեմբերի 19-ին ստորագրվեց ԱՊՀ երկրների համար «Ազատ առևտրի գոտու մասին» պայմանագիրը, որով հայ գործարարների համար կապահովվի ԱՊՀ երկրների շուկաներում գործունեության առավել բարենպաստ պայմաններ, ԱՊՀ տարածքում կձևավորվի ԱՀԿ-ի նորմերով և կանոններով առևտուր իրականացնելու հստակ ռեժիմ, կնվազեցվի որոշ երկրների կողմից կիրառվող արտահանման մաքսատուրքերի ցանկը:

Ընդունվել է «Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքի փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որը հստակեցնում և ընդլայնում է «ժամանակավոր ներմուծում վերամշակման համար՝ մաքսային ռեժիմի կիրառման հնարավորությունը՝ նախատեսելով առանձնահատուկ մոտեցումների սահմանման հնարավորություն:

«Ներքին շուկայի պաշտպանության մասին» ՀՀ օրենքում ընդունված փոփոխությունները բխում էին օղու տեղական արտադրողների և ներմուծողների միջև հավասար մրցակցային դաշտի ձևավորման և միջազգային նորմերին համապատասխան վերջիններիս համար միանման մոտեցման կիրառման անհրաժեշտությունից:

Ընդունվել են «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ, որոնց նպատակն է՝ նվազեցնել ոլորտում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող վերահսկողության վարչարարությունը:

ՀՀ կառավարության նախաձեռնությամբ ՀՀ էկոնոմիկայի նախարարի մասնակցությամբ ստորագրվել է Հայկական կոնյակագործների միության հիմնադիր պայմանագիրը և Միությունը ստացել է պետական գրանցում: Միության նպատակն է «Հայկական կոնյակ» տեղանվանման պահպանությունը, Հայկական կոնյակի արտահանման շուկաների պահպանումը և նոր շուկաների ընդլայնումը՝ պահպանելով կոնյակի որակական ցուցանիշները և համբավը:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ (ՏՏ) ՈՒ ԻՆՈՎԱՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՈՒՆ

Հանրապետության ՏՏ ոլորտում ակտիվ աշխատում է ավելի քան 300 ձեռնարկություն, որից 70-ը արտասահմանյան ընկերությունների մասնաճյուղեր են: 2011թ. ստեղծվել է մոտ 20 նոր ընկերություն: Ոլորտի շրջանառությունը կազմում է մոտ 205 մլն ԱՄՆ դոլար, որից մոտ 60% արտահանվում է: Զբաղվածների ընդհանուր թիվը կազմում է մոտ 5 հզ. մասնագետ, իսկ հեռահաղորդակցության ոլորտի հետ միասին՝ ավելի քան 10 հզ. մասնագետ: Արտադրության ծավալն աճել է շուրջ 30%-ով:

2011թ. ՏՏ ոլորտում հետբուհական ուսուցման, ինչպես նաև բուհերում կարճաժամկետ դասընթացների միջոցով մրցունակ և շուկայի պահանջներին բավարարող ՏՏ բարձրակարգ կադրերի պատրաստման նպատակով հիմնվել են տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների ոլորտի **Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոնը**, **Հայ-հնդկական ՏՀՏ գերազանցության կենտրոնը**, «**Նոկիա**» **մոբայլ լուծումների տարածաշրջանային լաբորատորիան**:

Ոլորտում ձեռներեցության խթանման, արդյունաբերություն-համալսարաններ կապի ամրապնդմանն ուղղված հետազոտությունների և մշակումների խրախուսման ուղղությամբ իրականացվել է «Գիտության և տեխնոլոգիաների ձեռներեցության ծրագրի (STEP) շրջանակում «VC» վենչուրային համաժողովը:

ՏՏ լուծումները տնտեսության այլ ճյուղերում կիրառելու վերաբերյալ գործարարների իրազեկման մակարդակի բարձրացման ուղղությամբ ՀՀ վարչապետի բարձր հովանու ներքո կազմակերպվել է «**ԴիջիԹեք Բիզնես**» **ֆորումը**: Շուրջ 30 կազմակերպություն ներկայացրեց տեխնոլոգիական նորագույն լուծումներ ու ինովացիոն մոտեցումներ: Ոլորտի զարգացումների վերաբերյալ հանրության իրազեկման մակարդակի բարձրացման ուղղությամբ կազմակերպվել է ամենամյա «**ԴիջիԹեք**» **տեղեկատվական**, **հեռահաղորդակցման և բարձր տեխնոլոգիաների մասնագիտացված միջազգային ցուցահանդեսը**: Ցուցահանդեսին մասնակցեցին տեղական և օտարերկրյա 115 ընկերություններ՝ նախորդ տարվա 68-ի համեմատ:

Միջազգային համագործակցությունը և ներդրումների ներգրավումը խթանելու, Հայաստանի բարձր տեխնոլոգիաների ոլորտը գլոբալ ճանաչելի դարձնելու նպատակով Երևանում տեղի ունեցավ «**ԱրմԹեք** 2011» **Հայաստանի բարձր տեխնոլոգիաների** 4-**րդ ամենամյա համաժողովը**՝ հնարավորություն ընձեռելով ավելի քան 250 մասնակիցների քննարկել ոլորտի խնդիրները:

«**Դ-Լինք**» ընկերության հետ բանակցությունների արդյունքում բացվել և ներկայումս Գյումրիում գործում է «Դ-Լինք» տարածաշրջանային միակ հետազոտական կենտրոնը:

Համաշխարհային բանկի «Էլեկտրոնային հասարակության և մրցունակության համար նորարարության» վարկային ծրագրի շրջանակում հայտարարվել է նաև «Համակարգիչ բոլորի համար» ծրագրի համակարգիչ արտադրող ընկերությունների ընտրության մրցույթը: Նույն ծրագրի շրջանակում հայտարարվել է նաև Հայաստանում Հավաստագրման կենտրոնի հիմնման նպատակով կազմա-

կերպության ընտրության մրցույթը: Վերջնականացվել են Գյումրու տեխնոպարկի հիմնական շենքի շինարարական աշխատանքներն սկսելու համար շինարարական կազմակերպության ընտրության մրցույթի տեխնիկական առաջադրանքները:

ՏՏ ոլորտի նորագույն կրթական ծրագրերի իրականացման, հայ դպրոցականների ՏՏ գիտելիքների մակարդակի բարձրացման և ոլորտի նկատմամբ նրանց հետաքրքրության խթանման ուղղությամբ «Հյուլեթ Փակարդ», «Ինթել», «Սիսկո» և «Մայքրոսոֆթ» ընկերությունների հետ համատեղ իրականացվում են «Համակարգիչ ուսուցիչների համար» «Դպրոցական համակարգիչ», «Երևանյան դպրոցներում ՏՏ խմբակների ստեղծման» ծրագրերը:

ՍԻՍԿՈ Ցանցային ակադեմիայում մեկնարկել են երկարաժամկետ մասնագիտական դասընթացները: Նախատեսվում է նաև «ՍԻՍԿՈ» կենտրոնի հիմնադրումը, ինչի նպատակով մշակվել է կենտրոնի մոդելը՝ հիմնված ՍԻՍԿՈ Ձեռներեցության ինստիտուտների և ՍԻՍԿՈ լաբորատորիաների համաշխարհային ցանցերի ուսումնասիրության արդյունքների վրա:

ՀՀ-ում էլեկտրոնային անձնագրերի և նույնականացման քարտերի համակարգի ներդրման նպատակով լեհական “PWPW SA” ընկերության հետ կնքվել է պայմանագիր և մեկնարկել են համակարգի ներդրման աշխատանքները: 2012թ. նախատեսվում է թողարկել առաջին էլեկտրոնային անձնագրերը և նույնականացման քարտերը:

ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել «Ինովացիոն տնտեսության ձևավորման մեկնարկային ռազմավարության հայեցակարգը», որով ներկայացվել են ազգային ինովացիոն համակարգի ձևավորմանն ուղղված նախաձեռնությունները:

Ա.Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիայի ֆիզիկայի բնագավառում արդիական գիտական ներուժի ապահովման 2011թ. ծրագրի շրջանակում կազմակերպվել են գիտական գործուղումներ Եվրոպական Միջուկային Հետազոտությունների Կենտրոն (CERN, Շվեյցարիա) և Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտ (ք.Դուբնա, Ռուսաստանի Դաշնություն): Լաբորատորիայի երիտասարդ գիտնականների խրախուսման միջոցառման շրջանակում տեսական և փորձարարական ֆիզիկայի, ինչպես նաև կիրառական ֆիզիկայի բնագավառներում կատարած լավագույն գիտական աշխատանքների համար երիտասարդ մասնագետներն ստացել են դրամաշնորհներ, սահմանվել են աշխատավարձի հավելավճարներ, ֆինանսավորվել է նրանց մասնակցությունը Չեխիայում, Ֆրանսիայում, Չինաստանում և ՌԴ-ում տեղի ունեցած միջազգային գիտաժողովներին, կազմակերպվել են գիտաթեմատիկ սեմինարներ, սարքավորումներ են ձեռք բերվել գիտական ենթակառուցվածքի արդիականացման համար: Ֆինանսավորվել է միջազգային փորձաքննություն անցած 8 նորամուծական նախագծի իրականացումը:

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

2011թ. Հայաստանում զբոսաշրջային արդյունաբերությունում պահպանվել են դինամիկ աճի տեմպերը: Հունվար-սեպտեմբերին Հայաստան ներգնա զբոսաշրջային այցելություններն աճել են 13,1%-ով՝ կազմելով 551635: Կանխատեսվում է առնվազն 15% տարեկան աճ, ինչը նշանակում է ավելի քան 780 000 ներգնա զբոսաշրջային այցելություն:

Դելյուքս կարգի շքեղ հյուրանոցներում ներդրումների, առավել բարձր որակական պահանջներ ունեցող զբոսաշրջիկների ներգրավման նպատակով շրջանառության մեջ են դրվել «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքներում փոփոխություն կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերը: Դրանք նախատեսում են 5 աստղանի որակավորման կարգը գերազանցող որակավորման կարգի ներդրում, որը կնպաստի առավել շքեղ հյուրա-

նոցների տարբերակումը 5 աստղանի հյուրանոցներից:

Գառնիում գործարկվել է զբոսաշրջիկների տեղեկատվական կենտրոնը, որն այցելուներին տրամադրել է տեղեկատվություն մարզի տեսարժան վայրերի, բնական գրավչությունների, ինչպես նաև կեցության օբյեկտների, փոխադրամիջոցների, սննդի օբյեկտների վերաբերյալ:

ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «Հարավային ուղղություն» զբոսաշրջային երթուղու հետ կապված խնդիրների լուծման միջոցառումների ծրագիրը:

Գործարկվել են Best Western Paradise հյուրանոցը Դիլիջանում, Ani Resort հյուրանոցը Հանքավանում: Հայաստանի հյուրանոցային տնտեսության նկատմամբ հետաքրքրվածություն են ցուցաբերել Howard Johnson, Hyatt և Kempinski և Ramada (Howard Johnson խումբ) համաշխարհային ցանցերը: Հայ և օտարերկրյա ներդրողները ցանցերի հետ ներկայումս վարում են համագործակցության բանակցություններ և 1-2 տարիների ընթացքում նախատեսվում է նշված ցանցերի մուտքը հայաստանյան շուկա: Ակնկալվում է նաև Marriott ցանցի ընդլայնում մարզերում:

Նախարարության և Buzz Business ընկերության միջև կնքված պայմանագրի շրջանակներում «Հայաստան՝ Նոյի երկիր» վավերագրական ֆիլմը հեռարձակման նպատակով ձեռք է բերվել լեհական, չեխական, հունական, ֆրանսիական միջազգային հեռուստաալիքների կողմից:

Հայաստանի զբոսաշրջային արդյունքը ներկայացվել է հինգ միջազգային հեղինակավոր զբոսաշրջային ցուցահանդես-տոնավաճառներում: Երևանում կազմակերպվեց «Հայաստանը խոսող քարերի երկիր» (CTS-2011) 11-րդ միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսը:

Կազմակերպվել են Երևանում՝ Զբոսաշրջության միջազգային օրվան նվիրված տոնակատարությունը, Լոռու մարզում՝ Հայ խոհարարական արվեստի և ավանդական ուտեստների փառատոնը, Վայոց Ձորի մարզում՝ Գինու փառատոնը: Փառատոնները լայնորեն լուսաբանվեցին CNN, ОРТ, РТР, Мир, Rustavi և տեղական հեռուստատեսությունների եթերով, ինչպես նաև տպագիր լրատվամիջոցներում և համացանցում:

2011թ. հուլիսին տեղի ունեցավ ՄԱԿ Զբոսաշրջության Համաշխարհային Կազմակերպության գլխավոր քարտուղար Թալեբ Ռիֆաիի պաշտոնական այցը Հայաստան: Այցելության շրջանակներում կայացան հանդիպումներ ՀՀ Նախագահի, ՀՀ վարչապետի, Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ, Նախարարության և ՄԱԿ ԶՀԿ միջև ստորագրվեց «Հարավկովկասյան զբոսաշրջության զարգացման նախաձեռնություն» փոխըմբռնման հուշագիր, պայմանավորվածություններ են ձեռք բերվել 2012թ. աշնանը Հայաստանում զբոսաշրջության միջազգային համաժողովի կազմակերպման, ինչպես նաև Մադրիդում ՄԱԿ ԶՀԿ գլխավոր գրասենյակում զբոսաշրջության ոլորտի հայ ուսանողների համար պրակտիկայի կազմակերպման վերաբերյալ:

Հոկտեմբերի 8-14-ը Հայաստանը մասնակցեց Կորեայի Կյոնջու քաղաքում կայացած ՄԱԿ Զբոսաշրջության Համաշխարհային Կազմակերպության (ՄԱԿ ԶՀԿ) գլխավոր ասամբլեայի 19-րդ նստաշրջանին: Նստաշրջանի շրջանակներում կայացավ նաև զբոսաշրջային պաստառների Vettor Giusti ցուցահանդես–մրցույթը: Մրցույթի արդյունքում Հայաստանը ներկայացնող պաստառը ճանաչվել է հաղթող ժողովրդի ընտրություն (People's Choice Award) անվանակարգում:

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ

«Հավատարմագրման մասին» ՀՀ օրենքի ընդունման արդյունքում կմեկնարկի եվրոպական և միջազգային հավատարմագրման համակարգերին մոտարկված ՀՀ հավատարմագրման համակարգի և հավատարմագրման ազգային մարմնի ձևավորումը, որն էլ իր հերթին կբարձրացնի ՀՀ-

ում հավատարմագրման բնագավառում մատուցվող ծառայությունների որակը և նախապայման կհանդիսանա Հավատարմագրման ազգային մարմնի կողմից հավատարմագրված համապատասխանության գնահատման մարմինների գործունեության արդյունքների փոխճանաչման համար:

2011թ. ընթացքում գործակալությունը համապատասխանության հավաստման բնագավառում իրականացրել է շուրջ 46 հավատարմագրման հայտերին կից ներկայացված փաստաթղթերի փորձաքննության աշխատանքներ, կազմակերպել 44 համապատասխանության և 18 պարբերական գնահատման աշխատանքներ ըստ դրանց գտնվելու վայրի: Գործակալության ներկայացմամբ հավատարմագրման խորհրդի կողմից առ այսօր հավատարմագրվել կամ հավատարմագրման ոլորտն ընդլայնել են 37 փորձարկման լաբորատորիաներ և սերտիֆիկացման մարմիններ:

ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ և ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ

2011թ. ընթացքում Գործակալության կողմից տրամադրվել է թվով 15 առևտրի իրականացման վայրի կազմակերպման գործունեության լիցենզիա: Դադարեցվել է 4 լիցենզիաների գործունեությունը, վերաձևակերպվել 1 լիցենզիա: Որակավորման վկայական է տրամադրվել է թվով 6 հյուրանոցային տնտեսության օբյեկտներին: Հայտատուների կողմից ներկայացված դիմումների հիման վրա տրամադրվել է «Ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» ռեժիմով ներմուծված և «Ժամանակավոր արտահանում՝ վերամշակման համար» ռեժիմով արտահանված ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք արդյունքի, ինչպես նաև վերամշակումից գոյացած թափոնների և մնացորդների նվազագույն քանակության վերաբերյալ 775 եզրակացություն: ՀՀ տարածքով երկակի նշանակության ապրանքների տարանցիկ փոխադրման վերաբերյալ ստացվել է 1 ծանուցում: ՀՀ անմշակ ալմաստի ներմուծման ժամանակ հաշվառվել է Քիմբերլի գործընթացի թվով 181 հավաստագիր, իսկ արտահանման ժամանակ տրամադրվել է Քիմբերլի գործընթացի թվով 72 հավաստագիր:

ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

2011թ. ընթացքում իրականացվել են բնագավառի իրավական դաշտի կատարելագործմանն ուղղված աշխատանքներ: Մասնավորապես, մշակվել է «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը, ինչը ՀՀ ԱԺ-ում արդեն անցել է առաջին ընթերցումը: Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների իրավական պահպանության բնագավառում իրականացվող քաղաքականությունն ուղղված է ԵՀ համագործակցության և գործընկերության պայմանագրով ստանձնած ՀՀ պարտավորությունների շրջանակներում մտավոր սեփականության բնագավառում օրենսդրության ներդաշնակեցմանը:

«Աշխարհագրական նշումների մասին» ՀՀ նոր օրենքին համապատասխան ՀՀ կառավարության որոշմամբ հաստատվել է «Աշխարհագրական նշման, ծագման տեղանվան և երաշխավորված ավանդական արտադրանքի հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգը:

ՀՀ կառավարություն է ներկայացվել «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որի ընդունումը կապահովի բնագավառում ԵՄ օրենսդրության հետ ներդաշնակեցումը և հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների արդյունավետ պահպանությունը:

ՀՀ կառավարության արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել է «Հայաստանի Հանրապետության մտավոր սեփականության իրավունքների ռազմավարությունը»: